

**ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ**

**ԱՊՐԻԼԵԱՆ ՏԽՈՒՐ  
 ԱՏՈՐՈՒՄՆԵՐ**

**ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ**

Հայ ժողովուրդի դեմ իրագործում 1915-ի Ցեղասպանության ամեն տարեդարձ՝ բազմաթիվ ընդվզումներով կր գեղու մեջ մի հայ մարդու ներաշխարհը: Ազգային գեղեցիկ վրայ, այդ ընկճումները, ընդհանրապես արտայայտություն կը գտնեն արտակարգ սուգով, ոգեկոչական համագային հանդիսություններով, ֆայլարշառներով, ցեղասպան թուրքի դեմ բարձրացում բողոքի եւ Ցեղասպանության ի՛ր եւ աշխարհով մէկ նանգումի ու դատապարտումի պահանջատիրութեամբ:

Արդէն իսկ դեմ յանդիման կը գտնուիմք հայ ժողովուրդի եւ մարդկութեան դեմ դատաւարները մի քանիսն ու իր անհասարկ գազանութեամբ իրագործում՝ աշխարհի վրայ իր նախընթացը չունեցող Ցեղասպանութեան 97-րդ հոգեխոնով տարեդարձին հետ, որ այս անգամ եւս հաշուեկշիռի կը գարնէ մարդկային խղճմտամբն ու արդարութիւնը, որոնք կը մատնեն աշխարհի, այսպէս կոչուած՝ յառաջդեմ ֆալսեղանքութեան սնանկութիւնը: Ինչպէ՞ս կարելի է ուրանալ, օր ցերեկով, աշխարհով մէկ մարդկութեան եւ տակաւին աշխարհացրի՛ւ վերապրող հայերու մերկ աչքերուն առջեւ տեղի ունեցած ինքն տասնամեակ եւ եօթօրով այնքան մօտիկ պատմական նշմարտութիւն մը, որուն գոհ գացին մէկ ու կէս միլիոն ու անլի անհատակներ:

Համանուն Ցեղասպանութեան ամեն տարեդարձ՝ անհղու ժամանակակից թուրք իշխանութեամբ կ'անդրադառնայ ցեղասպան օսմանեան կայսրութեան ժառանգորդ, արդի թուրք իշխանութիւններու ու թուրք ազգաբնակչութեան հոգեմտաւոր էություններ վրայ: Այդ անդրադարձումը անոր մէջ կ'արձագանքէ յանցարարի հոգեկան խանգարումներով, որոնք անարգանքի ու ամօքի սիւնին կը գամեն ողջ թրքութիւնը:

Այսօր 97-րդ տարին ըլլալով, ժամանակակից թուրք իշխանութիւնները կ'ուրանան գիրքն ընթացող, միշտ փտած ու միշտ աշխարհի ողորմութեամբ ապրող «հիւանդ կայսրութեան»՝ հայ ժողովուրդի ու մարդկութեան դեմ իրագործած գազանային սխրագործութիւնը, թող որ, ներհուստ, ինքն եւս համոզուած է անոր պատմական եղելութեան, բայց եւ ի վիճակի չէ խոստովանելու բազմաթիւ պատճառներով: Այդ գիտակցութիւնն է իրաւամբ, որ Ցեղասպանութեան տարեդարձի թուականի մերձեցումը կը խոռվէ իր հոգեկան անդորրը եւ մտային հա-

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՐՇԱԻՆ  
 ԹԵՒԱԿՈՒՅԵՑ ԵՐԿՐՈՐԴ ՇԱԲԱԹ**

*Մայիս 6-ին տեղի ունենալիք Հայաստանի խորհրդարանական ընտրութիւններուն առթիւ սկսած քարոզարշաւը թեւակոխեց իր երկրորդ շաբաթը, ընդգրկելով երկրի ամբողջ տարածքը:*

*Ընտրութիւններուն մասնակցող 9 կուսակցութիւններն ու կուսակցական դաշինքները, ինչպէս նաեւ անհատ թեկնածուներ կ'օգտագործեն աւանդական, ինչպէս նաեւ արդիական նոր միջոցներ՝ ընտրողներու ձայները ապահովելու համար:*

*Երեւոյթապէս ընտրապայքարը կը թուի ընթանալ բնականոն ձեւով, սակայն թերթերն ու կայքէջերը ողորուած են իշխանական երեք ուժերուն՝ Հանրապետական, Բարգաւաճ Հայաստան եւ Օրինաց Երկիր կուսակցութիւններուն կողմէ ժողովուրդին բաժնուող տարբեր տեսակի կաշառքներու մասին լուրերով:*

*Հիմնական պայքարը կ'ընթանայ երեք ուժերու՝ Սերժ Սարգս-*



Ընտրական ցուցապաստառներ Երեւանի պատերուն վրայ

եանի գլխաւորած իշխող Հայաստանի Հանրապետական կուսակցութեան, համախոհական կառավարութեան մաս կազմող եւ Հայաստանի թիւ մէկ օլիգարք՝ Գաբրիլ Ծառուկեանի ղեկավարած

Բարգաւաճ Հայաստան կուսակցութեան եւ նախկին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի գլխաւորած Հայ Ազգային Գոնակէսի միջեւ: Այս

**ԱՏՐՊԷՅՃԱՆԸ  
 ՈՒԶՄԱԿԱՆ ԾԱԽՍԵՐՈՒ  
 ԱՃՈՎ ԱՌԱՋԻՆ Է  
 ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ**

*Ռազմական ծախսերու աճով Ատրպէյճանն առաջինն է աշխարհի մէջ, կը յայտնեն Սթոքհոլմի մէջ գործող Խաղաղութեան Ուսումնասիրութեան Միջազգային Ինստիտուտի (SIPRI) մասնագէտները:*

*Ապրիլ 17-ին հրապարակուած իրենց զեկոյցին մէջ, ռազմական խնդիրներով զբաղող ամենահեղինակաւոր կեդրոններէն մէկուն մասնագէտները ամփոփած են վերջին տարիներուն տարբեր պետութիւններու կողմէ ռազմական կարիքներու վրայ ծախսուած գումարներու ընդհանուր ծաւալը՝ գալով այն եզրակացութեան, որ 2011 թուականին աշխարհի տարածքին, զինուած ուժերու վրայ ծախսուած ֆինանսական միջոցները, հիմնականին մէջ, նախորդ տարիներու մակարդակին վրայ մնացած են: Ատրպէյճանը, սակայն, կը կազմէ բացառութիւն:*

*«2008 - 2011 թուականներուն Ատրպէյճանի ռազմական ծախսերը աճած են մօտ 60 տոկոսով», - կը յայտնեն SIPRI-ի փորձագէտները՝ արձանագրելով, որ միայն 2011 թուականին Ատրպէյճանի ռազմական ծախսերը աւելացած են 89 տոկոսով:*

*«Ատրպէյճանն այս քայլին կը դիմէ Հայաստանի հետ վիճաբարոյց Լեւոնային Ղարաբաղի տարածաշրջանի շուրջ պատերազմը վերսկսելու գոռուածներու ազդեցութեան տակ», - կը գրեն զեկոյցի հեղինակները:*

*Հայաստանը այս ցուցանի-*

**«ՔԱՅԼԱՐՇԱՒ ՅԻՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ»  
 ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ  
 ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ**

In commemoration of the  
 97th ANNIVERSARY OF THE ARMENIAN GENOCIDE  
 and organized by  
 Gaidz Youth Organization

ՀԱԿՈՒՄ/ՔԱՅԼԱՐՇԱՒ  
 CANDLELIGHT VIGIL/WALK  
**March to Remember**

Monday, April 23, 2012  
 Երկուշաբթի, Ապրիլ 23, 2012

Հայկական Ցեղասպանութեան 97-ամեակին առթիւ, ՄԴՀԿ «Կայծ» երիտասարդական միութիւնը, համագործակցելով Հայ Ամերիկեան Խորհուրդի հետ (ՀԱԽ), կազմակերպած է մոմավարութիւն-հսկում, որ տեղի պիտի ունենայ Ապրիլ 23-ի երեկոյեան Փասատինայի քաղաքապետարանի շէնքին առջեւ, որուն պիտի յաջորդէ քայլարշաւ՝ դէպի Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի:

«Քայլարշաւ Յիշելու համար»՝ խորհրդանշական միջոցառում մըն է, յարգելու համար լիշատակը 1.5 միլիոնին, որոնք զոհ գացին մարդկութեան դէմ գործուած առաջին Ցեղասպանութեան. ոճրագործութիւն մը որ մինչեւ օրս կը մնայ չճանչցուած եւ հետեւաբար՝ անպատիժ:

Միջոցառումը պիտի սկսի երեկոյեան ժամը 6-ին: քայլարշաւի մասնակիցները պիտի համախմբուին Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ առջեւ (2215 East Colorado Boulevard Pasadena) ապա պատերով պիտի ուղղուին քաղաքապետարան, ուրկէ պիտի սկսի լուռ քայլարշաւը դէպի Եկեղեցի: Քայլարշաւի աւարտին, երեկոյեան ժամը 9-ին եկեղեցոյ շրջափակին մէջ տեղի պիտի ունենայ պաշտօնական յայտագիր, որուն ընթացքին պիտի ըլլան ելոյթներ: Ապա, Եկեղեցոյ հովիւ՝ Տէր. Սարգիս Պետրոսեան պիտի կատարէ հոգեհանգստեան արարողութիւն:



ՀԱՅԱՍՏԱՆ

ՅԱԿՈԲԵԱՆԸ ՊՆԴՈՒՄ Է՝ ԲՅԿ-Ն ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ Ե ԶԱԿ-Ի ՍՑԵՆԱՐԸ

«Ժառանգութիւն» կուսակցութեան փոխնախագահ Ռուբէն Յակոբեանի համոզմամբ, «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնն (ԲՀԿ) իրականացնում է Հայ ազգային կոնգրէսի (ՀԱԿ) ղեկավար Լեւոն Տէր-Պետրոսեանի սցենարը:



Ռուբէն Յակոբեան մամուլայառուի սիթինգին

Տէր-Պետրոսեանի սցենարի իմաստը, ըստ Յակոբեանի, իշխող քաղաքական կողմից իրականացնելու օրինակները Հանրապետականից (ՀՀԿ) ԲՀԿ տեղափոխելն է, որի հետ էլ հնարաւոր կը լինի հետագայում կազմել նոր կողմից:

«Եթէ Յիշում էք՝ Լեւոն Տէր-Պետրոսեանը իր ելոյթում Սերժ Սարգսեանին դիմեց «ընկերով», ասաց՝ Սերժ, մենք ընկերներ ենք եղել, դու լաւն ես, արի, դու անջատուի կամ տարանջատուի այդ ուժերից. անուններ էլ նշուեց՝ Ռուբէրդ Քոչարեան, նրա ծնած «Բարգաւաճ Հայաստան»-ը իր ղեկավարով, Վարդան Օսկանեան՝ ասաց, դու կարող ես ապացուցել, որ նրանք են այս ամբողջ ողբերգութիւնների հեղինակը, եւ մենք միասին կարող ենք ճանապարհ գնալ», - յայտարարեց Յակոբեանը:

«Չեմ ուզում մանրամասնել, բայց դուք տեղեակ էք, թէ ինչ աւարտ ունեցաւ այդ երկխօսութիւնը», - ասաց Յակոբեան՝ շարունակելով. - «Այլ խօսքով՝ Սերժ Սարգսեանը չհամաձայնեց դրան: Այս նոյն բառապաշարով, ուղղակի կուսակցութիւնների անունները փոխելով, այսօր Լեւոն Տէր-Պետրոսեանը այդ նոյն առաջարկութեամբ դիմել է ԲՀԿ-ին: Եթէ ուժային կենտրոնը փոխուած է, որոշակի պայմանաւորութիւն են ունենում, այդ դէպքում հեռանկարում դիտուած է, որ նոյն կողմից կարող է լինել, որտեղ դերակատարները այլ կը լինեն, բայց ուժային կենտրոնը մնում է կողմիցիոն ուժերից մէկը՝ այս դէպքում ԲՀԿ-ն: Չեմ կարող ասել, թէ ինչն է գայթակղել ԲՀԿ-ին, որպէսզի իրականացնի ՀԱԿ-ի այս սցենարը, բայց չեմ կարծում, որ սա լուրջ քաղաքական հեռանկար ունի», - ասաց նա:

«ԴՊՐՈՑԸ 2 ԺԱՍ ԴԱՍ ԵՐ ԱՐԵԼ, ՍԱՂԻՆ ՎԱԽԵՑՐԵԼ, ԲԵՐԵԼ ԵՒՆ ԱՅՍԵՂ»

Մասիսի թիւ 2 դպրոցի ուսուցչուհիներից մէկը՝ Էմմա Թանգեանը ՀԱԿ-ի հանրահաւաքի առաջին շարքերում էր եւ չէր վախենում տեսախցիկների առջեւ երեւալ. «Ես պահանջում եմ արդարութիւն, այս ուժերին ձայն չտանք, ոչինչ, թող ինձ դրա համար աշխատանքից հեռացնեն, ինձ համար դա փոյթ չէ», - ասել է նա:

«Մեր հարցին՝ փորձե՞լ են ձեզ հանրապետականացնել՝ ուսուցչուհի պատասխանեց. «Ոչ, ինձ չեն կարող, եթէ փորձեն՝ ես տեղ ունեմ գնալու: Ես գրագէտ եմ, կարող եմ թերթերին թղթակցութիւն տալ: Թող ինձ հանեն: 53 տարի աշխատում եմ դպրոցում: Ինձ վրայ չեն կարողանում ճնշումներ գործադրել, որովհետեւ ինձ գիտեն, բա կարողողան՞ում են: Թող մեզ գրագէտ մարդ ղեկավարի, բա լիկ ջան»:

Նա վստահ է, որ ՀԱԿ-ը Մասիսում ընտրազանգուած ունի, որքան էլ ՀԱԿ-ի երեւանեան հանրահաւաքներին տեղի իշխա-

նութիւնները խոչընդոտում են՝ իրենք տաքսի են վարձում՝ գալիս-հասնում. «Ո՞նց են ոստիկաններն ասում, թէ էդպիսի բան չկայ: Միշտ էլ ճանապարհները փակել են, միշտ տաքսիով եմ եկել: Ինչի՞ պիտի սուտ խօսեմ, մի աշխատանք է՝ թող էդ էլ իրենց լինի, իրենք չեն մարտելու: Չէ՞ք տեսնում, միտինգին մարդ չկայ, որովհետեւ ամբողջ հարկային վարչութեան պետը ընկած է նոյնիսկ իստութիւնները, ինչի՞ մասին է խօսքը: Փող էլ բաժանում են»:

Կինը վստահեցնում էր, որ մինչեւ հանրահաւաքը բնակիչներին ահաբեկել են: Աւելին՝ դպրոցի ուսուցչուհի պատմեց, թէ ինչ են արել Սերժ Սարգսեանի՝ Մասիս կատարած այցելութեան օրը. «Այն օրը դպրոցը 2 ժամ դաս էր արել, սաղին վախեցրել էին, բերել էին այտեղ: Իսկ ինչո՞ւ այսօր չէին փակում դպրոցները: Կէսը երեխաներ էին, ուսուցիչներն էլ վախերորած են գալիս, որպէսզի իրենց աշխատանքից չհեռացնեն»:

ԶՈՒԵԱՆԸ ԶԻ ԵՆԹԱՐԿՈՒՄ ԱՇՈՏԵԱՆԻ ԶՐԱՄԱՆԻՆ

Երեւանի պետական լեզուաբանական համալսարանի ռեկտոր Սուրէն Զոյեանը անօրինական է համարում Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարար Արմէն Աշոտեանի հրամանը, որով դադարեցուել են նրա լիազօրութիւնները եւ լուծուել է նրա աշխատանքային պայմանագիրը:

Սուրէն Զոյեանը «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեց հետեւեալը. - «Նոյն յաջողութեամբ ես կարող եմ նման հրաման արձակել, ուղղակի ես լաւ գիտեմ, որ դրա իրաւունքը չունեմ: Աշոտեանն էլ գիտի, բայց ձեւացնում է, թէ չգիտի: Ես չեմ ուզում խորանալ մնացած հարցերի մէջ: Ես հաստատուած եմ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան կողմից, կառավարութիւնը լիազօրել է նախարարութեանը ընդամենը պայմանագիր կնքել: Ուրեմն պիտի առնուազն կառավարութեան որոշում լինի»:

ԲՅԿ-Ն ԶԵՐՔՈՒՄ Ե ԶԱԿ-Ի ԶԵՏ ՊԱՅՄԱՆԱԴՈՐՈՒԱԾՈՒԹԻՒՆԸ

«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան համար անընդունելի են պատգամաւորութեան թեկնածուների, նրանց վստահուած անձանց վրայ յարձակումները», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ գրոյցում անդրադառնալով Մալաթիա-Սեբաստիա համայնքում Հայ ազգային կոնգրէսի թեկնածուների վրայ յարձակման դէպքին՝ յայտարարեց ԲՀԿ ղեկավար անդամ Նաիրա Զոհրաբեանը: Նա քաղաքական ուժերին կոչ արեց ժողովրդին ներկայացնել «ծրագրերի ու գաղափարների այլընտրանքներ, այլ ոչ թէ բռնացքների ու հայհոյանքների»:

ԲՀԿ-ի բուն քարոզարշաւն ու հանդիպումները կուսակցութեան քարոզչութեան պատասխանատուն նորմալ գնահատեց, բայց միաժամանակ նկատելի համարեց իրենց դէմ երբեմն իրականացուող «սեւ քարոզչութիւնը»:

«Շատ դէպքերում մենք նկատում ենք, որ տարբեր լրատուամիջոցներով կարծես թէ «սեւ քարոզչութեան» թիրախ փորձում է ընտրուել ԲՀԿ-ն, բայց դրանք դատապարտուած քայլեր են եւ որեւէ արդիւնք չեն տալու: Խորհուրդ եմ տալիս այդ ուժերին իրենց լրատուագործիքներով ոչ էներգիա վատնել, ոչ աւելորդ ֆինանսական ռեսուրսներ», - ասաց Զոհրաբեանը:


Արձագանքելով ընդդիմադիր «Ժառանգութիւն» կուսակցութեան փոխնախագահ Ռուբէն Յակոբեանի այն յայտարարութեանը, թէ ԲՀԿ-ն իրականացնում է Հայ ազգային կոնգրէսի ղեկավար Լեւոն Տէր-Պետրոսեանի սցենարը, որի իմաստը հետագայում միասին կողմից կազմելն է, Զոհրաբեանը յայտարարեց, որ դա այլուրեք է, որ դրանով «Ժառանգութիւն»-ը փորձում է արդարացնել չորս ուժերի միասնական շտաբին:

«ՕՍԿԱՆԵԱՆԸ ԶՈԳԵՎԱՐՔԻ ՄԷՋ Ե ԵՒ ԿՈՒԼԻՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ ԺԱՄԱՆԱԿՎՐԵՊ ԲԱՆԵՐ Ե ԱՍՈՒՄ», - ՅՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՅԱԿԵԱՆ

Հայաստանի հանրապետական կուսակցութեան պատգամաւոր եւ պատգամաւորութեան թեկնածու Յովհաննէս Սահակեանը վաղաժամ եւ ժամանակավրէպ է համարում ապագայ կառավարութեան ձեւաւորման մասին «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան անդամ Վարդան Օսկանեանի յայտարարութիւնները՝ աւելացնելով, որ Օսկանեանը հոգեվարքի մէջ է:

Tert.am-ի հետ գրոյցում, յիշեցնելով, որ ՀՀԿ-ն մշտապէս յայտարարել է, որ նոր կողմիցայի ձեւաւորումը հնարաւոր կը լինի միայն նոր Ազգային ժողով ձեւաւորուելուց յետոյ, այսինքն՝ դրանում ներկայացուած ուժերի յարաբերակցութեան մէջ յստակութիւն մտնելուց յետոյ, Յովհաննէս Սահակեանն ասաց. «Այդ ժամանակ երկրի նախագահը, եթէ նպատակաշարժար կը գտնի, ապա կը ձեւաւորուի նոր կողմից: Այսպէս, ժամանակավրէպ ու տարօրինակ է Վարդան Օսկանեանի յայտարարութիւնը»:

Նախընտրական հանդիպման ժամանակ ԲՀԿ համամասնական ցուցակի երկրորդ տեղն զբաղեցնող Վարդան Օսկանեանը յայտարարել էր, որ Մայիսի 6-ի ընտրութիւնները սոսկ օրէնսդիր մարմնի ընտրութիւն չեն, այլ նաեւ նոր կառավարութեան ընտրութիւն, եւ յաւելել, որ «Բարգաւաճ Հայաստան»-ը, ի տարբերութիւն անցած չորս տարիներին իշխանութեան, «իր տնտեսական քաղաքականութեան հիմնական թիրախ է դարձնելու տնտեսական աճը»:



ԲՀԿ ղեկավար անդամ Նաիրա Զոհրաբեան

մաս կազմելու ճանապարհից ետ կանգնելու իր քայլը:

«Դա առնուազն լուրջ չէ: ԲՀԿ-ն որեւէ քաղաքական ուժի հետ որեւէ ստուերային պայմանաւորուածութիւն չունի: Բոլոր ուժերի հետ կայ մէկ պայմանաւորուածութիւն, որպէսզի միացեալ ուժերով հնարաւորինս վերահսկուի ընտրութիւնների ազատ եւ արդար ընթացքը: Եթէ «Ժառանգութեանը» պէտք է իր նահանջը շատ կարեւոր նախաձեռնութիւնից արդարացնել ինչ-ինչ մտացածին, հնարովի եւ անլուրջ հիմնաւորումներով, ապա չեմ կարծում, որ հասարակութիւնն դրանք կ'ընկալի», - ասաց նա:

Հարցին, թէ ինչպէ՞ս է բացատրում Տէր-Պետրոսեանի վերաբերմունքի փոփոխութիւնը ԲՀԿ-ի նկատմամբ, Զոհրաբեանը պատասխանեց. «Իւրաքանչիւր քաղաքական ուժ իրաւունք ունի իր գնահատականները յայտնել: Դա Լեւոն Տէր-Պետրոսեանի իրաւունքն է»:



ՀՀԿ պատգամաւոր Յովհաննէս Սահակեան

ընտրութիւն չեն, այլ նաեւ նոր կառավարութեան ընտրութիւն, եւ յաւելել, որ «Բարգաւաճ Հայաստան»-ը, ի տարբերութիւն անցած չորս տարիներին իշխանութեան, «իր տնտեսական քաղաքականութեան հիմնական թիրախ է դարձնելու տնտեսական աճը»:

Օսկանեանը նաեւ նշել էր, որ ԲՀԿ-ն կառավարութեան օրօք փոքր եւ միջին ձեւաւորութիւնները Հա-

**ԼՈՒՐԵՐ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՐԵԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ  
ՀԻԱՍԹԱՓՈՒԼԱԾ Է ԻՍՐԱՅԷԼՑԻ ՆԱԽԱՐԱՐԻ  
ԱՌԱՋԻՆ ԱՅՑԻՑ**

Հայաստանի հրեական համայնքը հիասթափուած է իսրայելցի նախարարի Հայաստան կատարած առաջին այցից: Օրիթ Նոկեդը չի հանդիպել տեղի համայնքի հետ եւ սահմանափակուել է միայն համայնքի ղեկավարի հետ մի երկու նախադասութիւն փոխանակելով:

Ապրիլի 15-17-ին պատմութեան մէջ առաջին անգամ կայացել էր իսրայելցի նախարարի այցը Հայաստան:

Գիւղատնտեսութեան նախարար Օրիթ Նոկեդը հանդիպումներ էր ունեցել վարչապետ Տիրգրան Սարգսեանի, գիւղնախարար Սերգոյ Կարապետեանի, Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի հետ:

Սակայն Նոկեդն անտեսել է հանրապետութեան հրեաներին. «Մեզ տեղեկացրեցին, որ հանդիպումը չի լինելու, քանի որ նա մեկնել է Վրաստան», - իսրայելական «IzRus» պորտալին ասել է համայնքի ղեկավար Ռիմա

Վարժապետեան-Ֆելլերը:

Նրա խօսքով՝ հանդիպումը մեծ նշանակութիւն ունէր Հայաստանի հրեաների համար. «Մենք ձգտում ենք կամուրջ լինել երկրների միջեւ, բարելաւել իսրայելի իմիջը հանրապետութիւնում: Յանկանում էինք նաեւ նախարարի հետ շփուել: Բայց արդիւնքում նրա հետ միայն ես հանդիպեցի: Միջոցառումներից մէկի ժամանակ մենք այցեքարտեր փոխանակեցինք, մի երկու բարեկամական խօսք եւ վերջ», - հիասթափուած ասել է հրեական համայնքի ղեկավարը:

Նրա խօսքով՝ 2010թ. վերջից, երբ Երեւանում իսրայելի դեսպանի պաշտօնն ստանձնել է Շմուել Մերոմը, իսրայելի ԱԳՆ-ն անտեսում է հրեական համայնքին: «Նախորդ դիւանագէտները մեզ հետ կապ էին հաստատում, նա շրջանցում է Հայաստանի հրեաներին: Չգիտեմ՝ ինչու, բայց դա փաստ է», - եզրափակեց նա:

**ՆԱԼԲԱՆԴԵԱՆԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՄԻՆՍԿԻ ԽՍՐԻ  
ՀԱՄԱՆԱԽԱԳԱՐՆԵՐԻ ՀԵՏ**

Հայաստանի արտգործնախարար էդուարդ Նալբանդեանը այսօր վարչաաւոյում հանդիպում է ունեցել ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահներ Ռոբերտ Բրադ-կէի, Իգոր Պոպովի, Ժակ Ֆորի եւ ԵԱՀԿ-ի գործող նախագահի անձնակազմի ներկայացուցիչ ԱնՋէյ Կասպարչիկի հետ:

Արտգործնախարարութեան մամուլի եւ տեղեկատուութեան վարչութեան փոխանցմամբ՝ հանդիպման ընթացքում շարունակուել են քննարկումները դարաբաղեան հիմնախնդրի կարգաւորման գործընթացի, Յունուարին Սոչիում կայացած գագաթնաժողովին նա-

խագահների համատեղ յայտարարութեան դրոյթների իրականացման շուրջ: Այդ առումով էդուարդ Նալբանդեանն անդրադարձել է Բաքուից հնչող յայտարարութիւններին եւ ձեռնարկուող քայլերին, որոնք, ընդգծել է նա, ուղիղ հակասութեան մէջ են մտնում Սոչիի պայմանաւորուածութիւնների հետ:

Նալբանդեանի բնորոշմամբ՝ «վերջին շրջանում Ադրբեյջանում ամենաբարձր մակարդակով սաստկացած հակահայկական եւ ռասիստական հռետորաբանութիւնը մնաս է հասցնում բանակցային գործընթացի համար կարեւոր դրական մթնոլորտի ձեւաւորմանը»:

**ՀԱԿ-Ը ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՄ Է ՀՀԿ-Ի ԴԵՍ  
ՊԱՅՔԱՐՈՂ ԲՈԼՈՐ ՈՒԺԵՐԻ ՀԵՏ**



Լեւոն Տէր-Պետրոսեան ելոյթ կ'ունենայ հանրահաւաքի մը ընթացքին

«Ազատութիւն» ռադիոկայանի հարցազրոյցը Հայ ազգային կոնգրէսի առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանի հետ:

«Ազատութիւն» ռադիոկայան . - Հայ ազգային կոնգրէսը իր քարոզարշաւի ընթացքում իշխանական երկու ուժերի՝ «Օրինաց երկիր» եւ Հանրապետական կուսակցութեան հասցէին անուանական մեղադրանքներ է հնչեցնում, այնինչ «Բարգաւաճ Հայաստան»-ին անդրադարձ չէք կատարում: ԲՀԿ-ի հետ համագործակցութեան հնարաւորութեան մասին Ձեր քաղաքագիտական վերլուծութիւնը դեռեւս ուժի մէջ է:

Լեւոն Տէր-Պետրոսեան. - Լուրջ քաղաքագիտական դիրքորոշում է: «Ժառանգութեան», Դաշնակցութեան եւ ԲՀԿ-ի հետ կոնգրէսը ստեղծել է ընտրութիւնների վերահսկման միասնական շտաբ: Այսինքն այդ կուսակցութիւնների մեր գործընկերներն են, որոնց հետ մենք համատեղ աշխատանք ենք կատարում արդէն ընտրութիւններ անցկացնելու համար, եւ շատ բնական է, որ մեր գործընկերների նկատմամբ հակաքարոզչութիւն չենք իրականացնելու, վերաւորանքներ չենք հասցնելու, անձնական որակումներ չենք տալու: Այո՛, մեր թիրախը Հանրապետական կուսակցութիւնն է եւ «Օրինաց երկիր»-ը: Եթէ «Օրինաց երկիր»-ն էլ գար, մասնակցէր միասնական շտաբի աշխատանքներին եւ պայքարէր արդար ընտրութիւնների համար մեզ հետ միասին, բնականաբար, նա էլ կը մտնէր նոյն ցանկի մէջ: Իսկ թէ ինչու ենք տարբերում դա, շատ հասկանալի պատճառով. «Օրինաց երկիր»-ը եղել, կայ եւ յայտարարում է, որ այսուհետեւ էլ լինելու է Սերժ Սարգսեանի ճամբարում, մասնակցելու է յաջորդ կողմիցին:

«Բարգաւաճ Հայաստան»-ի աւելի հեռուն զնացող ծրագրերը մէջ տեսնու՞մ էք, օրինակ, յաջորդ կողմիցին մէջ չմտնելը: Լեւոն Տէր-Պետրոսեան. - Հեռուն զնացող ոչ մի բան չեմ ուզում տեսնել այսօր: Այսօր մենք ճակատամարտի մէջ ենք յանցաւոր ռեժիմի հետ եւ այդ յանցաւոր ռեժիմը տապալելու, նրանից ազատուելու բոլոր հնարաւորութիւնները պէտք է օգտագործենք: Ես նկատի ունեմ սահմանադրական, օրինական հնարաւորութիւնները: «Ազատութիւն» ռ/կ. - Եթէ Ազգային ժողովում մեծամասնութիւն չկազմէք, ո՞ւմ էք տեսնում ձեզ դաշնակցից: Լեւոն Տէր-Պետրոսեան. - Բոլորին տեսնում ենք, ովքեր կը ցանկանան մեզ հետ դաշնակցել: Քաղաքականութիւնը սա է: Քաղաքականութիւնը, այո, դաշնակցից որոնելու արուեստ է: Մենք կը փորձենք, կը փնտրենք, ով կը համաձայնի մեզ հետ համագործակցել, մեծ սիրով կը համագործակցենք: Ով չի համաձայնի, թող գնայ, համագործակցի Սերժ Սարգսեանի հետ:

**ՄՈՍԿՈՒԱՅՈՒՄ ՀԱՅԱԶԳԻ ԳՈՐԾԱՐԱՐ Է ՍՊԱՆՆՈՒԵԼ**

Ապրիլ 17-ի առաւօտեան Մոսկուայի հիւսիս-արեւելքում՝ Մարշալ Ժուկովի պողոտայի վրայ գտնուող իր տան շքամուտքում յայտնաբերուել է գործարար Տիրգրան Յովհաննիսեանի դիակը:

Ինչպէս հաղորդում է ռուսաստանեան «Նովոստի» լրատուական գործակալութիւնը՝ վկայակոչելով Ռուսաստանի քննչական կոմիտէի Մոսկուայի գլխաւոր քննչական վարչութեան ներկայացուցիչ Վիկտորիա Յիպլակովային, հայազգի գործարարի դին յայտնաբերել են հարեւանները՝ վերելակին յարող սանդղակի թակին: Յովհաննիսեանը մահացել է կրծքավանդակի երկու հրահրանքից: Քննիչների վարկածով՝ յանցագործը օգտագործել է իւրացուցիչով ատրճանակ:

Դէպքի վայրում քննչական խումբ է աշխատում: Փաստի կապակցութեամբ քրէական գործ է յարուցուել սպանութեան եւ ապօրինի զէնքի յատկանիշներով:

**ՄՈՍԿՈՒԱՅՈՒՄ ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ  
ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՈՂ ԳԱԶԻ ՍԱԿԱԳԻՆԸ**

«Հայֆուսագագարդ»-ի գլխաւոր տնօրէն Վարդան Յարութիւնեանը հանդիպում է ունեցել «Գազպրոմ»-ի ղեկավար Ալեքսէյ Միլլերի հետ, որի ընթացքում կողմերը քննարկել են 2012-2013 թրուականին Հայաստանին մատակարարուելիք գազի սակագները: Այդ մասին հաղորդում է հոլդինգի մամուլի ծառայութիւնը՝ առանց յաւելել մանրամասների:

«Գազպրոմ»-ի տարածած հաղորդագրութեան համաձայն, հանդիպմանը քննարկուել է նաեւ Հայաստանի տարածքում գազային եւ էներգետիկ ծրագրերում «Գազպրոմ»-ի մասնակցութեան հարցը, ինչպէս նաեւ «Հայֆուսագագարդ»-ի գործունէութեան ընթացիկ արդիւնքները:

**ՏԵՍԱԿՆԵՐԻ ԳՈՅԱՊԱՅՔԱՐ**

Շարունակուած էջ 2-էն  
չփոխուի:  
Այնպէս որ՝ նախընտրական այս շրջափոխը դեռ շարունակուելու է: Եթէ հասարակութեանն ապակողմնորոշելու խնդիր կայ,

ապա իշխանութիւններն առայժմ կարողանում են լուծել այդ խնդիրը: Իսկ ընտրութիւններին ընդամէնը երեք շաբաթ է մնացել:  
«ԶՈՐՐՈՐԴ ԻՆՔՆԻՇՆԱՆՈՒԹԻՒՆ»

**ՕՍԿԱՆԵԱՆԸ ՀՈԳԵՎԱՐՔԻ ՄԷՋ Է**

Շարունակուած էջ 3-էն  
յաստանում զարթօնք են ապրելու: Օսկանեանի այս յայտարարութիւնները Յովհաննէյ Սահակեանի համար աւելին են, քան տարօրինակ

եւ վարժամ: «Վարդան Օսկանեանը հոգեվարքի մէջ է, եւ նրա ելոյթներն, այսուհետ, պէտք է մեկնաբանեն հոգեբանները, այլ ոչ թէ քաղաքական գործիչները», - ասաց հանրապետական պատգամաւորը:

**ՊԻՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒԻ ՀԱՅՈՑ  
ՑԵՂԱՄԱՆՈՒԹԵԱՆ ԶՈՐ ԴԱՐՁԱԾ ՀԱՅԵՐՈՒ  
ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔ՝ ԿԱԶՄՈՒԿԸ 22 ՀԱՏՈՐՆԵՐԻ**

Հայաստանի Ազգային Արխիվը կը ծրագրէ հրատարակել 1918-ին պատրաստուած տեղեկանք, ուր նշուած են Հայոց Ցեղասպանութեան հետեւանքով կրած թէ՛ մարդկային ներուժի, թէ՛ նիւթական արժէքներու կորուստի չափերը:



Ազգային Արխիվի տնօրէն Ամատունի Վիրաբեան

Ազգային Արխիվի տնօրէն Ամատունի Վիրաբեան, խօսելով յառաջիկային հրատարակուելիք գիրքի մասին, յայտնեց, որ գիրքը կազմուած պիտի ըլլայ 22 հատորներէ:

«1918թ-ին գրի են առնուել 29 հազ. մարդու տեղեկանք՝ նրանց ծննդեան վայրի, տարեթիւի մասին: Սա նպատակ է ունեցել հետագայում թուրքիայից փոխհատուցում պահանջել: Տեղեկանքների մէջ տեղ են գտել նաեւ ցեղասպանութիւն իրականացնող ջոկատների առաջնորդների անունները, ինչպէս նաեւ այն մարդկանց, ովքեր պաշտպանել են հայերին», - ըսաւ Վիրաբեան:

Ազգային արխիվի տնօրէնի հաւաստիացուց, որ Արխիվի աշխատակիցները այս շրջանին կը փորձեն գտնել այն հիմքերը, որոնք միջոցաւ կ'իմանան, թէ Արեւմտեան Հայաստանի կաթողիկոսու-

թիւնները ինչ ունեցուածք ու հարստութիւն ունեցած են: Ըստ Վիրաբեանի, տարբեր արխիւներու մէջ կան վկայութիւններ, բայց այժմ կը փնտռեն յաւելեալ փաստեր:

«Վատիկանը, ինչպէս ամբողջ աշխարհում, այնպէս էլ Օսմանեան թուրքիայում, ունէր դիւանագէտ եւ այն օրերին էլ ամէն շաբաթ տեղեկութիւն էր յայտնում Հոռմի Պապին կատարուածի մասին: Նա նաեւ տեղեկութիւն է յայտնել գաղթի, տեղահանման, ջարդերու մասին, դրանք եւս օգտագործուելու են տարբեր գրքերի հրատարակման համար», - ըսաւ Ամատունի Վիրաբեանը:

**ՀԱՅ, ՈՎ ՎԵՐԱՊՐԵԼ Է ՋԱՐԴԵՐԸ ԵՒ...  
«ՏԻՏԱՆԻԿԻ» ԱՂԵՏԸ  
Հայի բախտ՝ փախչել Թուրքիայից եւ  
հայտնվել «Տիտանիկ» ի վրայ**



Նշան Գրիգորեան եւ ընտանիք

Սառնակեմի թոնից Նիւ Եորք ուղղութիւն վերցրած հսկայական բրիտանական նաւը, որն այն ժամանակաշրջանի տեխնոլոգիական գլուխգործոց է համարուել՝ 1912 թուականի Ապրիլի 14-ի կէսգիշերին բախուել է սառցալեռան եւ ժամերի ընթացքում խորտակուել: Յաճախ մտածում են, թէ դժբախտ նաւի ուղեւորները՝ գերհարուստ արդիւնաբերողներ էին, գործարարներ, Եւրոպայի արքայական հարստութիւնների եւ ազնուական ընտանիքների ներկայացուցիչներ, մինչդեռ իրականում նրանց առնուազն կէսը ծայրը ծայրին հազիւ հասնող մարդիկ էին, ովքեր երազում էին ապաստան եւ աշխատանք գտնել Հիւսիսային Ամերիկայում:

Հենց այդ ուղեւորների թւում էր երիտասարդ Նշան Գրիգորեանը, ով իր հօր յորդորով որոշել էր Նոր մայրցամաք մեկնել: Հասնելով Եւրոպայ, Նշանը «Տիտանիկի» տոմս էր հայթայթել:

Ահա թէ ինչ է տասնամեակներ անց այդ ողիսականի մասին պատմել Նշանի թոռը՝ Վան Սողոմոնեանը. - «Նրա հայրն ասել էր, որ պէտք է հեռանալ Օսմանեան թուրքիայից, Գանատայում նոր կեանք սկսել եւ յետագայում կրտսեր եղբայրներին կանչել: Երկուսը մնացել էին թուրքիայում: Նշանը եւ եւս 4 հայ մեկնել էին Ֆրանսա՝ Շերբուրգ, որտեղ էլ «Տիտանիկի»

տոմսեր էին գնել»: Հայրը, թերեւս, կանխատեսել է, թէ ինչ է գալու հայութեան գլխին, որովհետեւ Օսմանեան թուրքիայում այն տարիներին արդէն եղել են ջարդեր: Նա կեանքում այլեւս ոչ մի անգամ ջուր չի մտել, նաւ չի նստել:

Երրորդ կարգի տոմսերով ուղեւորների երկու երրորդը գոհուել է, որովհետեւ նրանք տեղեր են ստացել «Տիտանիկի» ստորին յարկերում, որտեղից դժուար էր հասնել փրկանաւակներին:

Ուղեւորների թիւը մօտ 2200 էր, նրանցից շուրջ 700-ն է փրկուել:

Նշանը պատմել է, որ սառցալեռանը հարուածելու պահին ինքը ընկերների հետ ներքեւի տախտակամածում թուղթ է խաղացել: Հարուածից յետոյ խուճապ է սկսուել, նրանք մի կերպ դուրս են պրծել, բարձրացել են վերին տախտակամած, որտեղից էլ բառիս բուն իմաստով նետուել են թիւ 10-ը մակոյցին ու փրկուել:

Փանատայում Նշանը հանգրուանել է Սենթ Քեթրին աւանում, աշխատել է «Ժեներալ Մոթորզի» ձուլարանում եւ փող վաստակելով, կատարել է հօրը տուած խոստումը՝ եղբայրներին թուրքիայից տեղափոխել է Գանատա:

Աւանում եղբայրները կառու-

Շաբ.ք էջ 19

**ՑԵՂԱՄԱՆՈՒԹԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ  
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՌՋԵՒ**

Հայկական Ցեղասպանութեան 97րդ տարելիցը արժանավայել կերպով պիտի նշուի Երեւոյի Երեւոյի, 24 Ապրիլ, 2012ին առաւօտեան ժամը 10:00ին, Փաստինայի Քաղաքապետարանի շէնքին առջեւ, 100 N. Garfield Avenue:

Տարեկան այս հոգեպարար Ոգեկոչումը կազմակերպուած է Փաստինայի Համագաղութային Մարմինն կողմէ, մասնակցութեամբ Փաստինայի Քաղաքապետական Խորհուրդին:

Գլխաւոր բանախօսները պիտի ըլլան Տէյվիտ Մեղրուպեան, անգլերէնով եւ դոկտ. Յովհաննէս Ահմարանեան, հայերէնով: Սրտի խօսքերով հանդէս պիտի գան նաեւ պետական բարձրաստիճան պաշտօնատարներ եւ օտար երկիրներու հիւպատոսներ:

Յաշտագիրը պիտի սկսի դրօշակի արարողութեամբ՝ մասնակցութեամբ Միացեալ Նահանգներու Ծովային Ուժի միաւորներուն «United States Marine Corp), որուն պիտի յաջորդէ Ամերիկեան եւ Հայկական քայլերգներու կատարողութիւնը: Տեղի պիտի ունենայ նաեւ գեղարուեստական պատշաճ յայտագիր, իսկ պատուի ջոկատի մասնակցութիւնը վատահուած է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Փաստինա-Վլենտէյլ մասնաճիւղի արիւններուն եւ արեւուշներուն:

Շրջանիս հայութիւնը սիրով հրաւիրուած է մասնակցելու վերոյիշեալ հանդիսութեան եւ իրենց ներկայութեամբ՝ նեցուկ կանգնելու մեր արդար պահանջատիրութեան:

[www.massispost.com](http://www.massispost.com)

**Bedros S. Maronian** 818/500-9585  
**Siamanto B. Maronian** 818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975  
More locations and more ways to service your insurance and financial needs

6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048  
805 East Broadway Glendale, CA 91205  
300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101

- Life Insurance
- Health Insurance
- Group & Individual
- Long Term Care
- Disability
- Estate Planning
- Will & Living Trust
- Full Annual Review
- Mortgage Protection
- College Planning
- Workman's Compensation
- Employee Benefits
- Annuity
- IRA
- 401K & 403B

**A.B.A. INSURANCE SERVICES**

**Insurance coverage can help you financially!**  
Ապահովագրութիւնը Անհրաժեղս է

Coverage & Protection should be on the top of your priority list.

«ՄԵՐ ՀՈՂԵՐ»ԷՆ ... «ՄԵՐ ԶՈՐՅԵՐ»Ը

ՅԱՐՈՒԹՅԵՐ ԴԱԻԻԹԵԱՆ

Ամէն անհատ թէ հաւաքակա- նութիւն պէտք է ձգտի զարգաց- ման, ընտրելով նպատակակէտեր եւ ձգտելով հասնիլ անոնց: Զարգաց- ման այս գործընթացը իր հունին մէջ պահելու լաւագոյն միջոցնե- րէն մին, գայն պարբերաբար վե- րաքննութեան ենթարկելու եւ վե- րարժեւորելու մէջ կը կայանայ, ստուգելու համար, որ հանգրուան առ հանգրուան կը մտնենք մեր հետապնդած նպատակներու իրա- կանացման:

Անհատի պարագային, ի՞նչ կ'որոշէ թէ ի՞նչ ուղիով կ'ուզէ ուղեւորել իր կեանքը: Իսկ հաւա- քականութեան պարագային, անոր ուղին կը ճշդուի իր մէջէն ծնած առաջնորդներու տեսիլքով, որմէ ազդուած եւ հմայուած, տուեալ հաւաքականութեան բաղադրիչ տարրերը կը նուիրուին այդ տե- սիլքի իրականացման:

Մեր պատանեկութեան օրե- րուն, մենք խանդավառուած կը քալէինք մեր «Մեծ Երազի ձամ- բուն վրայ»ով, պահանջելով «Մեր Հողերը, Մեր Հողերը»: Քայլար- շաներու եւ բողոքի ցոյցերու մաս- նակցելով, մենք կը հաւատայինք, որ կամաց կամաց կը մտնենայինք մեր «Մեծ Երազ»ին: Բայց տարի- ներու թաւալքին հետ կամաց կա- մաց սկսանք համոզուիլ, որ մեր թափառումները մեզ չէին տաներ դէպի մեր հողերը: Մեզմէ տարի- ներ առաջ արդէն, Զարեհ Որբու- նին համոզուած ըլլալով այդ մէ- կուն, այսպէս կ'արտայայտուէր. «Դաշնակցական խումբ, գնանք մենք Սասուն»: Եւ մենք Սասուն չէինք գացած: Հոտ էր հարցը: Եկած ենք փարիզ, Աթէնք, Հալէպ, Պէյրուս, հեռաւոր Ամերիկաներ, ամէն տեղ, ամէն տեղ, բայց ո՛չ Սասուն: Բայց հայը, մինչեւ վերջին հայը, սոթ- տած թեւերը լուացքի օճառոտ ջուրին մէջ՝ պիտի երգէ, երթանք մենք Սասուն... ե մինչեւ ձեռքերուն մորթին այրուիլը, կծկուիլը»:

Հիմա, միջին տարիք կը բո- լորենք: Կը նայինք մեր շուրջը, գտնելու այն տեսլական ունեցող առաջնորդները, որոնք պիտի գծեն հաւաքականութեան հետապնդելիք ուղին: Եւ ի՞նչ կը տեսնենք: Ոչ մեր «Մեծ Երազի» հողերու ջատագով մնացած է եւ ոչ ալ այդ ձամբուն վրայ քալողներ: Աւելի ցաւալի հարցը այն է, որ մեր հողերէն մեր բուն տեղահանութիւնէն ետք, հի- մա կամովին կը հեռանանք նաեւ մեզի մնացած պուտ մը հողէն... Կը հեռանանք, որովհետեւ խորենացիի բնութագրումով, մեր վրայ կը տիրեն իստասիրտ ու չար թագա- լորներ, որոնք ծանր, դժուարակիր բեռներ են բարձում, անտանելի հրամաններ են տալիս... կարգ չեն պահպանում, անողորմ են»: Այն- քան անողորմ, որ չեն վարանիր նոյնիսկ մնացած այդ պուտ մը հողի ընթերքի շահագործումով լեցնելու իրենց գրպանները եւ դուրս վանելու այդ հողի յաւերժութեան ապաւէն մշակները: Այնքան անո- ղորմ, որ «հաւատը ծախուած է այս ունայն կեանքի համար», ոչ միայն աշխարհական, այլ նոյնիսկ հոգեւոր առաջնորդներու կողմէ: Կը նայինք մեր շուրջը ու կը տեսնենք աշխար- հի չորս կողմերը ա՛լ աւելի ցիրու- ցան դարձած հայու բեկորները, որոնք «Մեր Հողեր»էն վազ անցած, խեղճացած են այնքան, որ կը մուրան գէթ ձանաչուծը «Մեր Զո- հերուն, Մեր Զոհերուն»... Այս ըն- թացքով ո՞ւր պիտի հասնինք...

«ՏՈՊՈՐՈՒԻԼ ՀԱՄԱՍԱՐԴԿԱՅԻՆ ԻՏԵԱԼՈՎ: ՊԱՅՔԱՐԻԼ ԵՒ Ի ՀԱՐԿԻՆ, ՄԵՌՆԻԼ ԱՅԴ ԻՏԵԱԼԻՆ ՀԱՄԱՐ:» ԱՐԱՍ ԱԶԸԳՊԱՇԵԱՆ (1867-1915)

Փոքր Հայքի Հերոս՝ Արամ Աջըզպաշեան ծնած էր Արբակիրի մէջ, 1867 թուին եւ գաւազն էր Պոլսաբնակ բարեկեցիկ ընտանիքի մը: Ան իր հուլիսեան շատ վեհանա- յը, ուշիմ եւ բարեհամբոյր: Շնոր- հիւ իր ուշիմութեան ան յաջողած էր իրաւագիտութեան ճիւղին մէջ եւ կրցած էր մտնել իրաւաբանա- կան համալսարան:

Արամ մեծ էր իբրեւ անհատ եւ հանրային գործիչ: Առաջին օրէն, յարելով Հնչակեան կուսակցութեան Պոլսոյ կազմակերպութեան, ան դարձած էր անոր ամենէն եռան- դուն եւ գործունեայ անդամներէն մէկը: Ան սովորական ուսանող մը չէր: Անոր կուրծքին տակ կը բաբախէր զգայուն սիրտ մը: Հայ ժողովուրդին դժնդակ կացութիւնը, անոր տառապանքներն ու դժբախ- տութիւնները կը փոթորկէին իր ներքին աշխարհը: Քաջ էր ան եւ շրջանայեաց եւ իբրեւ հանրային գործիչ ձեռներէց էր եւ շատ հեռա- տես:

Արամ ծնած էր հայ ժողովուր- դի ծոցին մէջ եւ գործած այդ շրջանակին մէջ: Անոր միտքը եւ հոգին նոյնացած էր Հնչակեան գաղափարախօսութեան հետ, եւ հակառակ անոր որ իր գործունե- ութիւնը սահմանափակուած էր որոշ հողամասի մը վրայ, ան մեծ նուի- րումով կ'աշխատէր բոլոր հարցե- րուն նպատակալարմար լուծում- ներ ապահովելու՝ միշտ հաւատա- րիմ մնալով իր նշանաբանին եւ միշտ անվախ՝ արհամարհելով ամէն տեսակի վտանգներ:

Արամ Աջըզպաշեան Պոլսոյ մէջ հիմը դրաւ իր հանրային եւ կուսակցական արի գործունեու- թեան: Այդ քաղաքին մէջ էր որ ան ամէն բան լքելով միացաւ Հնչակ-

եան կուսակցութեան եւ Գուրմ Գաբ- ուի ցոյցէն ետք մեկնեցաւ դէպի Երկիր, ուր հայութիւնը կը տառա- պէր թրքական դաժան բռնակա- լութեան ներքեւ, Փոքր Հայքը դարձնելով իր բեղուն ու ծաւալուն այլատեսակ յեղափոխական աշխա- տանքներուն կեդրոնը:

Պոլսոյ մէջ Արամին հեղինա- կութիւնն ու ազդեցութիւնը, մին- չեւ վերջ, ոչ միայն մնացին ան- խախտ, այլեւ գորացան, շնորհիւ դժոխային տարիներու ընթացքին իր ձեռք բերած փորձառութեան եւ այդ հանգամանքին որ իր խոր- հուրդները իմաստուն էին եւ իր դիրքը հաստատ:

1908-էն 1915 իր տարած գործունեութիւնը շատ յատկանշա- կան: Իր բռնած դիրքերով, հայ ժողովուրդի պատմութեան ամենէն դժուար տարիներուն, ան մեծապէս յուզած է շրջանի եւ Պոլսոյ հան- րային եւ կուսակցական կեանքը:

1915-ի Մեծ Եղեռնէն առաջ, որպէս նախանձախնդիր Հնչակեան եւ հայ ժողովուրդի վիճակով շատ մտահոգ, հետեւեալ տողերուն մէջ կը գտնենք Արամի անվախ եւ անբասիր յեղափոխականի հոգին.-

«Ընկերնե՛ր, Հայաստանի ողջ հայութեան կեանքը վտանգի ներ- քեւ է:

«Ստոյգ տեղեկութիւն կայ որ Պոլսէն գաւառական բոլոր պաշտօ- նէութեանց հրահանգուած է որ հայասէր պաշտօնեաները փոխա- րինեն՝ թագաւորին հրամանը տա- րապահելու գործադրողներով. անն- շան կասկածի հիման վրայ ձերբա- կալուող հայեր խիստ պատիժի ենթարկուին. հայ դպրոցներու մէջ արգիլուին այն դասագիրքերը

Մար.ք էջ 19

ԱՄԵՐԻԿԱՅԻՆ ՀԱՄԱՍԱՐԴԿԱՅԻՆ ՄԵՐ ԵՂԵՌՆԻ ՕՐԵՐՈՒՄ

Համադրեց՝ ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Իթիհաստական թուրքերու կազմակերպած հայկական Մեծ Եղեռնէն անմիջապէս առաջ եւ ետք, Ամերիկա ժամանող հայ երի- տասարդութեան մեծ մաս մը կը միանայ Ս.Դ. Հնչակեան կուսակ- ցութեան:

1914ին Սիրաքիւզ- Նիւ Եորք քաղաքին մէջ գումարուող Ամերի- կայի Հնչակեան Պատգամաւորա- կան ժողովի որոշումները կը հան- դիսանան յաջողութեան գրաւա- կան մը, Ամերիկայի Հնչակեան շրջանին համար: Կը կազմուին նորանոր մասնաճիւղեր, մեծ գա- դութներու մէջ կը բացուին գրա- դարան-ակումբներ, կը կազմուին թատերական խումբեր, իրարու կը յաջորդեն հրապարակային դասա- խօսական ժողովներ ու թատերա- կան ներկայացումներ, որոնց շնոր- հիւ գաղութահայութիւնը կը ստուարացնէ Հնչակեան շարքերը: Կը կազմուին նաեւ Ս.Դ. Հնչակեան կանանց մասնաճիւղեր, որոնք իրենց գործունեութեամբ մեծ օգտակա- րութիւն կ'ունենան կուսակցու- թեան:

Համաշխարհային առաջին պա- տերագմը սկսած էր: Թուրքիան լծուած էր Վիլհելմ Բ.ի կառքին: Հայոց դարաւոր թշնամին ընկճելու հայկական ցանկութիւնը խօսքի շրջագիծէն դուրս կ'ելլէր եւ կ'իջ- նար գործնական ճանապարհի մը: Ամբողջ աշխարհը իրագեկ

եղած էր բարբարոս թուրք կառա- վարութեան զազրելի արարքին: Ամբողջ ազգ մը երեք տարի անընդ- հատ քշել դէպի անապատը, անօթի, ծարաւ, բոկոտն եւ կիսամերկ:

Բունի կերպով անցնել վարա- րած գետի մէկ ափէն միւսը, որ- պէսգի խեղդամահ ըլլան, մտրակով բարձրացնել լեռներն ու իջեցնել ձորերը, որ առանց գնդակ պարպե- լու մեռնին եւ կեր դառնան գա- զաններուն:

Պէտք էր Գառազեռի մէջ առ- նել բորենի թուրքը եւ ազատագրել Հայաստանը, յատկացնելու համար վերապրողներուն: Այս էր միջուկը «Հայկական Դատ»ին:

Էջմիածնահայ գահակալ Գէ- որգ Ե. Կաթողիկոսը՝ Պողոս Նու- պար փաշան լիազօրած էր հայկա- կան հարցը հետապնդելու Դաշնա- կից Պետութիւններու մօտ: Փարի- զի մէջ կազմուած էր Հայկական Պատուիրակութիւնը: Կովկասի մէջ յառաջացած Հայկական Կամաւո- րական գունդերը օրհներ էր ինքը՝ Հայոց Կաթողիկոսը:

Հայութիւնը դարձած էր հզօր պետութեանց փոքրիկ դաշնակի- ցը...

Այդ օրերուն Ամերիկայի Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան շարքերուն մէջ կար եռուզեռ մը: Հայ երիտասարդութիւնը արդար վրէժով լեցուած՝ անձկագին կ'ու- զէր կամաւորագրուիլ եւ ընկերա-

Մար.ք էջ 19

SOՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ԱՅՆԹԱՊԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 92-ՐԴ ՏԱՐԵԿԱՐՁԻՆ
ARMENIAN AINTABTYZ CULTURAL ASSOCIATION
THE 92ND ANNIVERSARY COMMEMORATION OF AINTAB HEROIC RESISTANCE
Sunday, April 22, 2012, at 5:00 p.m.
St. Gregory Armenian Catholic Church – Kouyoumjian Hall
1510 E. Mountain St., Glendale, CA 91207
REFRESHMENTS & RECEPTION ALL ARE WELCOME
Visit the Aintabtyz web page: www.noraintab.org

### ՀԱՅՈՑ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆԴԵՍ

Հայոց ցեղասպանութեան ուսումնասիրութեան բնագաւառում ՀՅԹԻ գիտական հետազոտութիւնների արդիւնքները միջազգային գիտական շրջանակներին հասանելի դարձնելու, ինչպէս նաև Հայոց ցեղասպանութեան թեմայով հայ եւ օտար հեղինակների աշխատանքներն աւելի լայն լսարանին ներկայացնելու համար ՀՅԹԻ յայտարարում է նոր՝ «Հայոց ցեղասպանութեան ուսումնասիրութեան միջազգային հանդէսի» թողարկումը: Սկզբնական փուլում հանդէսը լոյս է տեսնելու տարեկան երկու թողարկումով: Բացի գիտական յօդուածներից, հանդէսում գետեղուելու են նաև Հայոց ցեղասպանութեան թեմայով լոյս տեսած գրականութեան գրախօսականներ: Հանդէսի խմբագրական կազմում ընդգրկուած են հեղինակաւոր ցեղասպանագէտ-գիտնականներ:

#### Նպատակը եւ ոլորտը

«Հայոց ցեղասպանութեան ուսումնասիրութեան միջազգային հանդէսը» հրատարակում է Հայոց ցեղասպանութեան եւ ընդհանրապէս ցեղասպանագիտութեան թեմայով յօդուածներ եւ գրախօսութիւններ: Նախապատուութիւնը տրուելու է պատմութեան, քաղաքագիտութեան, մարդաբանութեան, սոցիոլոգիայի, գրականութեան եւ իրաւունքի ոլորտի յօդուածներին: Այլ գիտութիւններին առնչուող յօդուածները եւս կ'ընդգրկուեն հանդէսում, եթէ դրանք հիմնական առնչութիւն կ'ունենան թեմայի հետ:

#### I. Յօդուածների ներկայացման ձևը

- «Հայոց ցեղասպանութեան ուսումնասիրութեան միջազգային հանդէսին» ներկայացուող յօդուածները պէտք է վերաբերեն ցեղասպանագիտական թեմաներին:

- «Հայոց ցեղասպանութեան ուսումնասիրութեան միջազգային հանդէսին» ներկայացուող յօդուածները պէտք է իւրաքանչեւ ներդրում ունենան ցեղասպանագիտութեան ուսումնասիրութեան մէջ:

- Յօդուածները պէտք է ներկայացուեն անգլերէնով եւ ճշգրտորէն համապատասխանեն «Հայոց ցեղասպանութեան ուսումնասիրութեան միջազգային հանդէսի» յօդուածների ներկայացման ձևաչափին եւ գրելաոճին:

- Այն յօդուածները, որոնք նախկինում հրատարակուած են եղել կամ միաժամանակ ներկայացուած են այլ հրատարակչութիւններին, չեն կարող ընդգրկուել «Հայոց ցեղասպանութեան ուսումնասիրութեան միջազգային հանդէսի» թողարկումներում:

- Յօդուածները ներկայացուում են համակարգչային շարուածքով՝ էլեկտրոնային փոստի միջոցով՝ journal@genocidemuseum.am էլեկտրոնային հասցէին:

- Յօդուածի նախընտրելի չափն է՝ 6000-7000 բառ, ներառելով ծանօթագրութիւնները եւ յղումները:

- Յօդուածը պէտք է ունենայ հիմնական եզրոյթների եւ եզրահանգումների մասին շեղատառ համառոտագիր՝ շուրջ 100 բառ:

- Լուսանկարները պէտք է ներկայացուեն բարձր որակով եւ սեւ-սպիտակ գոյնով:

- Յօդուածի հետ անհրաժեշտ

է ներկայացնել հեղինակի համառօտ ինքնակենսագրութիւնը, ինչպէս նաև հեղինակի հետաքրքրութիւնների մասին հակիրճ տեղեկութիւն:

- Նախքան ներկայացուած նիւթերի հրատարակութեան ընդունելը, բոլոր յօդուածները գրախօսուած են տուեալ ոլորտի առնուազն երկու փորձագէտի կողմից:

- Խմբագիրն իրաւասու է խմբագրել յօդուածը «Հայոց ցեղասպանութեան ուսումնասիրութեան միջազգային հանդէսի» խմբագրական մօտեցումներին համապատասխանեցնելու նպատակով, կամ մերժել ներկայացուած յօդուածը, եթէ այն չի համապատասխանում խմբագրութեան կողմից սահմանուած գիտական յօդուածների հրատարակման չափանիշներին:

- Գրքի եւ մամուլի գրախօսութիւնները պէտք է պարունակեն առաւելագոյնը 2000 բառ:

II. Լեզուն, ուղղագրութիւնը եւ քերականութիւնը

- Մէկից մինչև տասը թուերը գրել տառերով, իսկ մնացածները՝ թուերով:

- Ամսթուերը եւ տարեթուերը գրել հետեւեալ կերպ. Դեկտեմբեր 21, 1915, 1894-96, 1900-ականներ:

- Յապաւումները պէտք է վերծանուեն եւ թարգմանուեն անգլերէն:

- Եթէ յապաւումն ընդգրկուած է յօդուածի մէջ եւ օգտագործուած է առաջին անգամ, անհրաժեշտ է փակագծերում տալ ամբողջ անուանումը (օրինակ, «Միութիւն եւ առաջադիմութիւն կուսակցութիւն» (ՄԱԿ)):

- Որեւէ օտար բառ, որը յայտնի չէ լայն հասարակական շերտերին, անհրաժեշտ է շեղատառ գրել, ինչպէս, օրինակ, եղեռն կամ վիլալէթ:

- Յօդուածում օգտագործուած աղբիւրների եւ գրականութեան յղումներում լատինական տառերից տարբեր աղբիւրների դէպքում յղումները կատարել լատինական այբուբենով՝ փակագծերում տալով թարգմանութիւնը եւ լեզուն:

III. Յօդուածի ձևաչափը

- Վերնագիրը գրել մեծատա-

ռերով եւ կենտրոնում

- Բոլոր յօդուածները ներկայացուած են «Times New Roman» տառատեսակով, 12 տառաչափով (ներառեալ վերնագիրը եւ յղումները), միջտողային հեռաւորութիւնը՝ 2:

- Երկար մէջբերումները (աւելի քան չորս տող) ներկայացուած են տեքստում, առանձին հատուածով, 10 տառաչափով, առանց չակերտների:

#### IV. Յղումներ

- Յղումները պէտք է համարակալուեն սկզբից մինչև վերջ:

- Բոլոր գրքերի, ամսագրերի /հանդէսների վերնագրերը գրել շեղատառ, օրինակ, Տատրեան Վ., Հայոց ցեղասպանութեան պատմութիւն, Ազգային կոնֆլիկտը Բալկաններից Անատոլիա եւ Կովկաս, Օքսֆորդ, 1995, էջ 18:

#### V. Հեղինակային իրաւունք

- Հրատարակուած նիւթերի հեղինակային իրաւունքը Հայոց ցեղասպանութեան ուսումնասիրութեան միջազգային հանդէսինն է:

Յետադարձ կապ  
journal@genocide-museum.am  
Հեռ.: (374 10) 39 09 81





# Massis Weekly

Volume 32, No. 14

Saturday, APRIL 21, 2012

## “Walk to Remember” Genocide Commemorative Event in Pasadena

In commemoration of the  
97th ANNIVERSARY OF THE ARMENIAN GENOCIDE  
and organized by  
Gaidz Youth Organization

ՀՍԿՈՒՄ/ՔԱՅԼԱՐՇԱԻ  
CANDLELIGHT VIGIL/WALK  
March to Remember

Monday, April 23, 2012  
Երկուշաբթի, Ապրիլ 23, 2012

Walk from  
Pasadena City Hall to  
St. Gregory Armenian Church for  
Requiem Service

PASADENA, CA -- In commemoration of the 97<sup>th</sup> anniversary of the Armenian Genocide, the Gaidz Youth Organization in collaboration with the Armenian Council of America, is organizing a candlelight vigil on Tuesday, April 23 starting at the Pasadena City Hall and concluding at the grounds of St. Gregory Armenian Apostolic Church in Pasadena.

“A Walk to Remember” is a symbolic event to honor the memory of the 1.5 million victims of the first genocide perpetrated against humanity, a crime that remains unrecognized and subsequently unpunished, and people who are yet to find justice.

The event will begin at 6 pm as attendees will gather at St. Gregory Armenian Church located at 2215 East Colorado Boulevard in Pasadena and

will be bussed to the City Hall where the silent march will begin. After the silent march and at the same church grounds, the official program will begin at estimated 9:00 pm which will include brief remarks by various speakers and community leaders. This will be followed by requiem services and prayers delivered by Fr. Sarkis Petoyan, and facilitated by the church’s parish council.

The event is free and open to the public. For more information, please contact [caghakhanian@armeniancouncil.org](mailto:caghakhanian@armeniancouncil.org) or visit our website at [www.Gaidz.org](http://www.Gaidz.org).

We urge our community members to support this event and participate in honoring the memory of our martyrs and at the same time to raise awareness of our cause.

## April 24 Commemoration at Pasadena City Hall

PASADENA -- The 97<sup>th</sup> Commemoration of the Armenian Genocide will take place on Tuesday, April 24, 2012 at 10:00 am, at the City Hall of Pasadena. (100 N. Garfield Ave.)

This annual event is organized by the Armenian Community Coalition of Pasadena, in conjunction with the City of Pasadena.

The program will start with the presentation of Colors by the United States Marine Corp, followed by the rendition of the United States and Republic of Armenia Anthems. The boy scouts of the Armenian General Benevolent Union’s Pasadena-Glendale Chapter will stand honor guard.

The keynote speakers will be



David Meghroubian, in English and Dr. Hovhannes Ahmaranian, in Armenian. Also addressing the audience will be Pasadena Mayor the Honorable Bill Bogaard, elected officials and other dignitaries.

There will also be an appropriate cultural program, to duly mark this somber occasion. The public is invited to come and show its support.

## Aliyev Blames ‘Armenian Lobby’ for International Criticism

BAKU -- Azerbaijani President Ilham Aliyev has described the worldwide “Armenian lobby” as his nation’s number one enemy and seemingly blamed it for international criticism of Baku’s human rights record.

“The Armenian lobby is the driving force of negative information about us,” he said during a cabinet meeting held on Monday and reported by Azerbaijani news agencies the following day.

“An information war is waged against us ... The Armenian lobby is especially active in that information war. Attempts to badmouth Azerbaijan, to deny Azerbaijan’s realities, to present Azerbaijan to the outside world as a backward and undemocratic country primarily result from dirty deeds of the Armenian lobby,” Aliyev said in remarks cited by the official Azertag news agency.

“The scope of their influence is quite broad. They [Armenians] are represented in the leading print media outlets of various countries. Sometimes they go under different names and hide their ethnic origin,” added Aliyev.

The Azerbaijani government’s human rights record is under growing international scrutiny ahead of the Eurovision song contest that will be held in Baku next month. In recent



reports cited by Western media, Amnesty International and Human Rights Watch strongly criticized the government for breaking up opposition protests, jailing their participants and suppressing broader dissent. There have even been calls in the European Parliament and from human rights activists and Azerbaijani bloggers for an international boycott of the contest.

Armenia withdrew from the annual show last month. It attributed the boycott to Aliyev’s March 1 remark that “Armenians of the world” are Azerbaijan’s main enemy.

The Azerbaijani leader made a similar, albeit more carefully worded, statement on Monday. “For us, the number one enemy is the Armenian lobby,” he said. “We must be prepared to fight against it.”

## Second Week of Campaigning for Armenia's Parliamentary Elections

While the campaign for the May 6 parliamentary elections is actively on in Armenia, analysts and sociologists are trying to figure out whether the line-up of political forces will change in the next National Assembly.

The Gallup Organization conducted a survey in Armenia on April 4-10 showing that 34 percent of respondents are willing to give their votes to the ruling Republican Party of Armenia (RPA), with 28 percent ready to cast their ballots for the Prosperous Armenia Party (PAP) and only 9 percent for the opposition Armenian National Congress (ANC).

Based on interviews with respondents, the pollsters conclude that the RPA is likely to lose the absolute majority that it enjoys in the current parliament. This is also what representatives of some political forces confirm.

Experts now say that RPA’s monopoly in parliament may collapse, but instead PAP may build another monopoly with the support of ANC. Some doubt that would amount to a noble goal given that PAP has been part of the governing coalition and bears responsibility for the current situation in Armenia.

The struggle between RPA and

PAP is seen in the light of competition between the second and third presidents of Armenia, Robert Kocharian and his successor Serzh Sarkisian. If PAP manages to win a majority in the next parliament, or even if it manages, through joint efforts with others, to deprive RPA of its monopoly, chances for Kocharyan’s political comeback would sharply increase.

### Violence Against Opposition Campaigners

Armenia’s president and head of the ruling Republican Party (RPA) has issued another call for tolerance amid more reports of violence in Yerevan against some opposition campaigners.

Speaking to voters in a southern Armenian province on Tuesday Serzh Sarkisian said that “Armenians have no right to form ranks against each other.”

